

Վանկուլիութիւնը ԵՆԻՅէրի կազմակերպութենէն առաջ է գտնէ Հայաստանի մէջ : Վանկուլիներու տիրապետութեան ժամանակ , բերդապահութիւն և թնդանօթածգութիւնը անցեր է Տէր—Բարսեղեանց ցեղին :

Տէր—Բարսեղեանց ցեղը կայ մինչ ցարդ , անոնք կ'ապրին Վան - Այդեստան , Քէնտրժիի կողմերը : Նոյնպէս Քէնտրժիի թաղէն Մէլիքզադեան ազգանունով Հայիմը կը պատկանէր Վան քաղաքի դրան բանալին : Թիւրքաց տիրապետութեան ժամանակ , բանալին յանձնած աստէն պէրաթ է ստացեր : Վան - Կուլիները կազմուած էին գլխաւորաբար այն նպատակաւ , որ Պարսից ղէմ պատերազմ ունեցած ժամանակ , այդ բանակը կը լինէր առաջամարտիկ , և կամ Հայաստանն ու Քիւրդիստանը Վան - Կուլիների իշխանութեամբ մի պատուար էին Պարսկական արշաւանքին : Վան - Կուլիների բանակը կը կազմուէր Հայերէ ու Քիւրդերէ :

Մի օրինակ Վան - Կուլիների գործերէն :

Վան - Կուլիութեան անկման օրերուն , երբ կառավարիչները կը լինէին Քիւրդերը , ինչպէս Քէօր Մուստաֆա փաշան , որ Թէմուր օղլիներու պապն էր , և որոնց ազգագրութիւնը կը հաստատէ որ Հայ ցեղէ եղեր են , Քէօր Մուստաֆան համարուած է քաղաքի կառավարիչ : Վանի բերդի ետե պարտէզ կը անկէ նա . երաշխ տարի լինելով , Քաղաքի հասարակութեան այգիների ջուրը կը կտրէ ու կը բերէ իր պարտէզը ջրելու . հասարակութիւնը կը ղրմէ Վան - Կուլիների գլխաւորներէն մէկին - Խօջա Մարխասեանի : Խօջա Մարխասեանը կը վերցնէ 50-60 ձիաւոր ու կ'երթայ բերդի ետե . ձիաւորներին կը հրամայէ պարտէզին մէջ ձիարշաւ խաղալ : Այնտեղ այնքան կը խաղան , որ պարտէզը կոխտուելով կը դարձնեն հարթ հաւասար դետին , ու այնպէս ետ կը դառնան : Քաղաքի կառավարիչը կանչել կու տայ Վան - Կուլիների այդ գլխաւորներէն Խօջա - Մարխասեանին : Խօջա - Մարխասեանը , մի քիչ ոսկի դրած փոքրիկ ախտէի մէջ , վրան քօղ մը ձգած , ու քօղի մի ծայրն էլ այն-